ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության» (փաստաթղթային կոդ՝ Կ-129-02.05.2019-ՖՎ-012/0) վերաբերյալ

ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Համաձայն հաշվետվության, ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1.341.7 մլրդ. դրամ, ծախսերը՝ 1.447.1 մլրդ. դրամ (ճշտված պլանի կատարողականը՝ 94.7%), իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 105.4 մլրդ. դրամ:

Սույն Հաշվետվության առումով հատկանշական են հետեւյալ տեղեկություններն ու միտումները:

1. 2018 թվականի փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության զարգացման միտումները նախորդ տարվա համեմատությամբ որոշակիորեն դանդաղել են: Մասնավորապես, 2018 թվականին գրանցվել է 5.2 տոկոս տնտեսական աճ նախորդ տարվա 7.7 տոկոսի դիմաց: Ընդ որում, աճը հիմնականում ապահովվել է ոչ արտահանելի (մասնավորապես՝ մշակույթ զվարճություններ և հանգիստ, առևտուր և ֆինանսական ու ապահովագրական գործունեություն) ճյուղերի հաշվին:

Աղյուսակ 1.

Տնտեսական աճի դինամիկան 2008-2018 թվականներին[1]

[1] Սույն տեղեկանքում օգտագործված 2008-2012 թվականների տվյալները վերցված են Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013-ից, 2013-2017 թվականների տվյալները՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018-ից, 2018 թվականի տվյալները՝ 2018 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունից և Հայաստանի Հանրապետության սոցիալ-

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ՀՆԱ (տրլն դրամ)	3.568	3.141	3.460	3.777	3. 997	4.555	4.828	5.043	5.067	5.568	-
Տնտեսական աճ %	6.8	-14.4	2.1	4.6	7.2	3.5	3.4	3.0	0.2	7.5	5.2
ՀՆԱ (մլրդ ԱՄՆ դոլար)	11.662	8.648	9.260	10.142	9.950	11.121	11.609	10.553	10.572	11.536	-
ՀՆԱ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	3. 606	2.666	2.844	3.363	3.290	3.680	3.852	3.512	3.524	3.872	-
Դրամի հաշվարկային փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի հաշվով	305.9	363.3	373.6	372.5	401.7	409.6	415.9	477.9	480.5	482.7	483

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ի տվյալներից, չնայած 2018 թվականին հանրապետությունում գրանցված տնտեսական աճի ցուցանիշը զիջում է նախորդ տարվա ցուցանիշին, այդուհանդերձ, 2012 թվականից հետո գրանցված ամենաբարձր տնտեսական աճն է:

2. Հաշվետու տարում արձանագրված տնտեսական աճին նպաստել են ծառայությունների ոլորտը՝ 4.7 տոկոսային կետով, արդյունաբերությունը՝ 0.7 տոկոսային կետով և շինարարությունը 0.1 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է բացասական ազդեցություն՝ 1.3 տոկոսային կետով: Ընդ որում, 2018 թվականին արդյունաբերությունն աճել է 4.1%-ով, ծառայությունների ոլորտը՝ 9.6%-ով, շինարարությունը՝ 1.6%-ով, իսկ գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է անկում 8.5 %-ով:

տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին հրապարակումից, ինչպես նաև Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2018 հրապարակումից

Աղյուսակ 2.

Տնտեսության ճյուղերի նպաստումը տնտեսական աճին 2008-2018 թվականներին

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ՀՆԱ	6.8	-14.4	2.1	4.6	7.2	3.5	3.4	3.0	0.2	7.5	5.2
Արդյունաբերություն	0.4	-1.0	1.4	2.3	1.0	0.8	0.0	1.0	0.8	1.8	0.7
Գյուղատնտեսություն	0.3	0.1	-2.6	2.4	1.9	1.6	1.5	2.1	-1.0	-0.6	-1.3
Շինարարություն	1.8	-11.4	0.5	-2.1	0.1	-1.5	-0.4	-0.4	-1.0	0.2	0.1
Ծառայություններ	3.0	0.3	1.8	1.5	3.2	2.3	2.2	0.8	1.9	5.1	4.7

3. 2018 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 3.4%-ով: Ընդ որում, պետական սպառումը նվազել է 6.4 %-ով, իսկ մասնավոր սպառումն աճել է 5.3%-ով:

Հաշվետու տարում կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 5.0%-ով: 2018 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 5.2%-ով՝ նախորդ տարվա համեմատ դանդաղելով 13.5 տոկսային կետով: Ապրանքների եւ ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ աճել է 10.9%-ով՝ նախորդ տարվա համեմատ դանդաղելով 13.7 տոկսային կետով:

4. 2018 թվականին սպառողական շուկայում արձանագրված 1.8% 12-ամսյա գնաճը առավելապես պայմանավորվել է սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչքը և ծխախոտը) ապրանքախմբում արձանագրված 1.8% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.9 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրված 3.2% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրված սակագների 0.8% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ):

5. 2018 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատությամբ խորացել է և կազմել ՀՆԱ-ի 9.1%-ը: Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2018 թվականին կազմել է 37.6%՝ բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը 0.3 տոկոսային կետով: Իսկ ապրանքների եւ ծառայությունների ներմուծման մասնաբաժինը կազմել է 53%՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 3.5 տոկոսային կետով: Դրամական փոխանցումները տարվա արդյունքներով կազմել են ՀՆԱ-ի 9.9%-ը՝ նախորդ տարվա 9.8%-ի դիմաց:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2018 թվականի արդյունքներով կազմել է 7375.2 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման եւ ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 7.8%-ով՝ կազմելով 2411.9 մլն. ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 21.1%-ով եւ կազմել է 4963.2 մլն. ԱՄՆ դոլար:

Ներմուծման 21.1% աճի 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է ներդրումային բնույթի՝ «Մեքենաներ, սարքավորումներ եւ մեխանիզմներ» ապրանքախմբով: Ներմուծման աճին զգալի են նպաստել նաև «Վերգետնյա, օդային եւ ջրային տրանսպորտի միջոցներ» և «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.8 և 1.8 տոկոսային կետերով):

2018 թվականին ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է և արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 71%-ը:

6. 2018 թվականին դրամի միջին փոխարժեքը կազմել է 483.0 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա միջին փոխարժեքի (482.7) նկատմամբ արժեզրկվել է 0.06%-ով:

7. 2018 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.4%-ը՝ նախորդ տարվա 22.2%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 21.0%-ը՝ նախորդ տարվա 20.8%-ի դիմաց: 2017 և 2018 թվականների համադրելի ցուցանիշների համեմատության դեպքում պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կկազմեն ՀՆԱ-ի 23.2%-ը՝ նախորդ տարվա 21.9%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ՀՆԱ-ի համապատասխանաբար 21.8%-ը և

20.5%-ը: Արդյունքում հարկային եկամուտները և պետական տուրքերը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել են 1.3 տոկոսային կետով:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով, 2018 թվականի արդյունքներով, ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 2.9 տոկոսային կետով և կազմել 24.1%: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 21.6%-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ 2.5%-ը:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2018 թվականին կազմել է ՀՆԱ-ի 1.8%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.0 տոկոսային կետով: 2018 թվականին արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 40.2% նախորդ տարվա 42.5%-ի դիմաց:

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

8. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով ծրագրվել էր ստանալ 1308.3 մլրդ. դրամ եկամուտներ, որից 1272.5 մլրդ. դրամը՝ ներքին աղբյուրների, 35.8 մլրդ. դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Օրենսդրության պահանջներից ելնելով պետական բյուջեի ծրագրային եւ փաստացի ցուցանիշներում ներառվել են նաեւ ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը (40.9 մլրդ դրամ), դրոշմանիշային վճարների գումարները (7.1 մլրդ դրամ), ինչպես նաեւ առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները (0.2 մլրդ դրամ): Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաեւ հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է 57 մլրդ. դրամով (4.4%-ով) և կազմել 1365.3 մլրդ. դրամ, որից 1326.8 մլրդ. դրամը՝ ներքին աղբյուրների, 38.6 մլրդ. դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով:

Հարկերի միասնական հաշվի զուտ մուտքը 2018 թվականին կազմել է 48.1 մլրդ դրամ, որը, թեպետ, իր բնույթով կարող է համադրելի համարվել նախկինում վճարվող կանխավճարների (գերավճարների) հետ, սակայն ի տարբերություն նախորդ տարիների, չի հաշվառվել որպես պետական բյուջեի եկամուտ, ինչը 2018 թվականի ցուցանիշը 2017 թվականի ցուցանիշի հետ անհամադրելի դարձնող գործոններից մեկն է: Բացի այդ, հարկերի գծով առաջացած գերավճարների վերադարձը նույնպես կատարվում է մեկ միասնական հաշվով: Այսինքն, առանձին հարկատեսակների գծով գումարների վերադարձը չի արտացոլվում տվյալ հարկատեսակների մուտքերում,

ինչպես կատարվում էր նախկինում: Ուստի առանձին հարկատեսակների մուտքերը նույնպես համադրելի չեն նախորդ տարվա մուտքերի հետ: Հարկ է նշել նաև, որ տնտեսավարողների հարկային հաշվետվություններով 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ կանխավճարների (գերավճարների) հաշվին տարեկան հարկային պարտավորությունների հետ հաշվանցման գումարը կազմել է 55.3 մլրդ դրամ կամ պետական բյուջե մուտքագրված հարկերի և տուրքերի 4.4%-ը:

Աղյուսակ 3.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2008-2018 թվականներին

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ընդամենը եկամուտներ, որից մլրդ դրամ	785.4	690.0	780.4	880.9	946.2	1071.4	1144.8	1167.7	1171.1	1237.8	1341.7
Աճը նախորդ տարվա համեմատությամբ (%)	-	-12.1	13.1	12.9	7.5	13.2	6.8	2.0	0.3	5.7	8.4
ՀՆԱ-ի նկատմամբ %	22.0	22.0	22.6	23.3	23.7	23.5	23.7	23.2	23.1	22.2	22.4
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր մլրդ դրամ	621.1	522.4	694.1	654.0	749.3	1000.9	1064.1	1067.9	1079.7	1158.0	1258.1
Աճը նախորդ տարվա համեմատությամբ (%)	-	-15.8	24.7	-5.7	14.6	33.6	6.3	0.4	1.1	7.2	8.6
ՀՆԱ-ի նկատմամբ %	20.3	19.9	20.2	20.6	22.0	22.0	22.0	21.2	21.3	20.7	21.0
Պաշտոնական	15.0	21.7	30.6	59.4	18.7	13.3	17.3	29.9	31.4	14.6	11.2

դրամաշնորհներ մլրդ դրամ											
ՀՆԱ-ի նկատմամբ %	0.4	0.7	0.9	1.6	0.5	0.3	0.4	0.6	0.6	0.3	-
Այլ եկամուտներ մլրդ դրամ	44.3	43.0	50.4	44.0	49.1	57.2	63.4	70.0	60.0	65.2	72.3
ՀՆԱ-ի նկատմամբ %	1.2	1.4	1.5	1.2	1.2	1.3	1.3	1.4	1.2	1.2	-

2018 թվականին փաստացի եկամուտները կազմել են շուրջ 1341.7 մլրդ. դրամ և արձանագրվել է կառավարության կողմից ճշտված ծրագրի 98.3% կատարողական: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 99.7%-ով՝ առանց հարկերի միասնական հաշվի մնացորդը հաշվի առնելու, իսկ վերջինս հաշվի առած՝ կատարողականի ցուցանիշը կազմել է 103.5%: Այլ եկամուտների ծրագիրը կատարվել է 111.8%-ով, պաշտոնական դրամաշնորհներինը՝ 29.1%-ով: Նշենք, որ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 37.4 մլրդ դրամ՝ 91.5%-ով ապահովելով ծրագիրը:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները 8.4%-ով կամ 103.9 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: 2017 և 2018 թվականների համադրելի ցուցանիշների համեմատության դեպքում պետական բյուջեի եկամուտների աճը կկազմի 13.8% կամ 168.7 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 14.4%-ով (164.9 մլրդ դրամով) և 11%-ով (7.2 մլրդ դրամով), իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ նվազել 23.2%-ով (3.4 մլրդ դրամով):

Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 22.4 %, որը 1.3 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը՝ 21.9%:

9. Պետական բյուջեի հարկային եկամուտները եւ պետական տուրքերը կազմել են շուրջ 1,258.1 մլրդ. դրամ կամ օրենքով հաստատված ծրագրային ցուցանիշի 100.8%-ը: Եթե հաշվի առնենք նաև միասնական հաշվի 48.1 մլրդ դրամ զուտ մուտքը, որը թեև օրենքի տեսանկյունից չի համարվում պետական բյուջեի հարկային եկամուտ, սակայն փաստացի հարկ վճարողների կողմից վճարվել է հարկերի միասնական հաշվին, ինչպես նաև բացառելով պետական հիմնարկների արտաբյուջետային մուտքերն ու առանց սահմանափակման իրականացվող ծախսերի արդյունքում ձևավորված եկամուտները, ապա հավաքագրված եկամուտների համադրելի ցուցանիշը կկազմի 1,296.7 մլրդ դրամ կամ սկզբնական տարեկան ծրագրի 103.9%-ը:

Հարկային եկամուտների եւ պետական տուրքերի հաշվին է ապահովվել ՀՀ պետական բյուջեի եկամուտների 94.0%-ը:

2017 թվականի համեմատ հարկային եկամուտները եւ պետական տուրքերն աճել են 14.4%-ով կամ 164.9 մլրդ դրամով: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակատվածի համեմատ բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է աճ:

10. 2018 թվականին հարկային եկամուտների եւ պետական տուրքերի 34.8%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 438.2 մլրդ. դրամ: Նշված գումարից 296.6 մլրդ. դրամը ստացվել է ներմուծման հարկումից, 141.3 մլրդ. դրամը՝ ապրանքների եւ ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ի աճին հիմնականում նպաստել է մակրոտնտեսական բարենպաստ միջավայրը: 2018 թվականին անվանական ՀՆԱ-ն կանխատեսվել էր 5,850.7 մլրդ դրամ, այնինչ փաստացի արդյունքներով արձանագրվել է ՀՆԱ-ի շուրջ 6,002.7 մլրդ դրամ մակարդակ, ինչը զգալիորեն անդրադարձել է ԱԱՀ-ի փաստացի ցուցանիշի վրա: Դրական ազդեցություն է գործել նաեւ ներմուծման ծավալների աճը:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 8.7%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 109 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 47.2 մլրդ դրամ, իսկ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 61.7 մլրդ դրամ: 2017 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերի աճ է արձանագրվել ԼԲ տեղական

արտադրության, ԼԲ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով: Հարկ է նշել, որ ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերն ավելի ցածր տեմպով են աճել, քան հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից մուտքերը: ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ծխախոտի, շարժիչային յուղերի և օղու արտադրանքի ներմուծումից ստացված մուտքերի աճով:

Աղյուսակ 4.

Հարկային եկամուտներ ծավալը ՀՀ-ում 2008-2018թթ.

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ԱԱՀ (մլրդ դրամ)	318.3	254.1	301.7	328.5	369.7	401.9	440.4	423.9	391.1	406.6	438.2
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոս)	43.8	40.6	43.1	42.3	42.1	40.1	41.4	39.7	36.2	35.1	34.8
Ակցիզային հարկ (մլրդ դրամ)	45.9	42.8	48.1	39.4	49.3	52.1	50.6	49.0	59.7	82.3	109.0
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոս)	6.3	6.8	6.9	5.1	5.6	5.2	4.8	4.6	5.5	7.1	8.7
Շահութահարկ (մլրդ դրամ)	86.2	80.8	77.8	97.8	118.6	124.6	103.6	103.7	127.2	109.9	170.1
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ	11.9	12.9	11.1	12.6	13.5	12.4	9.7	9.7	11.8	9.5	13.5

(տոկոս)											
Եկամտային հարկ (մլրդ դրամ)	53.8	60.2	73.9	81.2	91.7	251.1	289.2	311.7	332.7	341.5	356.6
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոս)	7.4	9.6	10.6	10.4	10.4	25.1	27.2	29.2	30.8	29.5	28.3

2018 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 13.5%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 170.1 մլրդ. դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի գծով ևս արձանագրվել է մուտքերի աճ, որը հիմնականում պայմանավորված է ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազայի և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտի շահութահարկի աճով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է շուրջ 356.6 մլրդ. դրամ եկամտային հարկ, ապահովելով հարկային եկամուտների եւ պետական տուրքերի 28.3%ը: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է միջին ամսական անվանական աշխատավարձի աճով (2018 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 4%-ով) և 2018 թվականին նախորդ տարվա համեմատ գրանցված աշխատողների քանակի աճով (36.9 հազար անձով):

2018 թվականին պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է 80.2 մլրդ. դրամ՝ ապահովելով հարկերի եւ տուրքերի 6.4%-ը: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 10.6%-ով կամ շուրջ 7.7 մլրդ. դրամով, ինչը պայմանավորված է ինչպես Հայաստանի Հանրապետության՝ ԵՏՄ անդամ երկրներին համամասնորեն տրվող մաքսատուրքի գումարների աճով, այնպես էլ երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ մաքսատուրքով հարկվող ապրանքների ծավալների աճով:

2018 թվականին շրջանառության հարկի գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 21.3 մլրդ դրամ (կազմելով հարկային եկամուտների և պետական

տուրքերի 1.7%-ը): Շրջանառության հարկի գծով ևս նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աճ՝ հիմնականում պայմանավորված առևտրի և ծառայությունների ծավալների համապատասխանաբար 12.5% և 20.4% աճով:

2018 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 54.2 մլրդ. դրամ բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար՝ կազմելով հարկերի եւ տուրքերի 4.3%-ը: Նշված գումարից 11.8 մլրդ. դրամը կազմել են բնապահպանական հարկերը, 42.4 մլրդ. դրամը՝ բնօգտագործման վճարները, որից 39.3 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի գծով մուտքերի ավելացմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 28.5 մլրդ. դրամի այլ հարկեր՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.3%-ը: Մասնավորապես՝ 6.5 մլրդ. դրամ են կազմել արտոնագրային հարկը, 6.1 մլրդ. դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, իսկ շուրջ 7.4 մլրդ դրամ՝ ,Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասինե ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 3.3 մլրդ դրամ դրամ են կազմել ճանապարհային հարկի գծով մուտքերը:

11. 2018 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 37.9 մլրդ. դրամ պետական տուրքեր՝ 6.7%-ով կամ 2.4 մլրդ դրամով գերազանցելով տարեկան ճշտված ծրագրով ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 2%-ով կամ շուրջ 756.8 մլն դրամով:

12. 2018 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 11.2 մլրդ. դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 29.1 %-ը, այսինքն կանխատեսվածից պակաս է ստացվել շուրջ 27.3 մլրդ. դրամ: Շեղումը մեծ մասամբ առաջացել է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով պայմանավորված, որոնց շրջանակներում ստացվել է կանխատեսված գումարի 35%-ը՝ 11.2 մլրդ. դրամ: Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 23.2%-ով կամ 3.4 մլրդ դրամով:

13. 2018 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 72.3 մլրդ. դրամ այլ եկամուտներ, որը ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը գերազանցում է 11.8%-ով: 2017 թվականի համեմատ այլ եկամուտներն աճել են 11%-ով կամ 7.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պաշտոնական դրամաշնորհների, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի աճով:

ՀՀ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

14. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1,465.2 մլրդ. դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, հաշվի առնելով օրենսդրության պահանջները, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաեւ ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաեւ առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև պետական բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ճշտված ծրագիրը կազմել է շուրջ 1,527.3 մլրդ. դրամ:

Պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,447.1 մլրդ դրամ, տարեկան ծրագիրը կատարվել է 94.7%-ով: Շեղումների ընդհանուր գումարի 48%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 52%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Ըստ ֆինանսավորման աղբյուրների պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է բյուջեի ծախսերի 95.2%-ը կամ 1,377.7 մլրդ դրամը, որոնց ծրագիրը կատարվել է 97.9%-ով: Բյուջեի ծախսերի 4.8%-ը՝ 69.4 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է ծրագրի 57.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերը նվազել են 3.8%-ով կամ 57.7 մլրդ դրամով:

2018 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 7.8% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերը նվազել են 2.8%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը. այն կազմել է 24.1%՝ 2017 թվականի 26.7%-ի դիմաց:

15. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 1,299.0 մլրդ. դրամ: Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 11.8%-ը՝ շուրջ 152.8 մլրդ. դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 99%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են ընդամենը 5.2%-ով:

16. 2018 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 148.1 մլրդ. դրամ կամ ընդհանուր ծախսերի 10.2%-ը և տարեկան ծրագրի 78%-ը: 2017 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 37.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի կրճատմամբ:

17. ՀՀ 2018 թվականին պետական բյուջեից 278.5 մլրդ. դրամ է տրամադրվել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերին՝ ապահովելով ծրագրի 97.6% կատարողական: 2017 թվականի համեմատ ոլորտի ծախսերն աճել են 7.9%-ով կամ 20.4 մլրդ դրամով:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 20.9 մլրդ. դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 92.5%-ը:

2018 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 91.2%-ով՝ կազմելով շուրջ 4.1 մլրդ դրամ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 13.1 մլրդ. դրամ՝ կազմելով ծրագրի 92.3%-ը:

Աղյուսակ 5.

ՀՀ 2008-2018թթ. պետական բյուջեների ծախսերը (մրդ. դրամ)

Գործառնական դասակարգմա խմբերի անվանումները	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ընդամենը ծախսեր, այդ թվում	810.6	929.1	954.3	986.5	1006.1	1142.9	1235.0	1.408.9	1.449.1	1504.8	1447.1
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	104.8	113.0	143.3	154.1	160.5	188.1	217.3	281.4	292.1	274.7	278.5
Պաշտպանություն	121.2	130.2	147.5	145.5	154.1	182.0	190.0	198.5	225.9	294.4	238.5
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	61.7	69.5	67.4	72.5	76.6	91.4	104.8	122.0	100.8	122.5	123.1
Տնտեսական հարաբերություններ	89.4	133.8	112.4	83.9	71.1	128.3	83.3	109.8	131.1	129.5	112.2
Շրջակա միջավայրի պաշտպանություն	3.0	3.9	4.9	6.6	7.0	4.6	4.7	5.6	4.5	5.4	5.7
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	14.0	21.1	42.8	43.8	14.3	21.7	31.3	39.2	25.6	12.6	11.7
Առողջապահություն	49.9	56.2	56.1	63.3	64.5	64.4	76.6	86.1	88.6	83.2	79.6
Հանգիստ, մշակույթ և կրոն	16.0	16.3	16.1	17.6	22.8	18.6	21.4	30.4	26.6	26.0	25.3
Կրթություն	103.5	107.5	97.8	106.1	102.8	103.1	115.8	122.3	122.4	124.4	121.6
Սոցիալական պաշտպանություն	212.6	243.6	244.2	256.2	291.7	297.4	342.5	383.7	396.8	408.9	416.6
Հիմնական բաժիններին չդասվող պահ. ֆոնդեր	34.3	33.9	21.6	36.8	41.9	43.2	47.0	29.9	15.1	20.0	34.3

18. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեն կատարվել է 105.4 մլրդ. կազմելով ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշի 65.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է եկամուտների նկատմամբ ծախսերի առավել ցածր կատարողականով, ինչի արդյունքում օգտագործվել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում նախատեսված՝ բյուջեի ազատ միջոցների ընդամենը 65.6%-ը, իսկ արտաքին աղբյուրներից ներգրավվել է նախատեսված վարկային միջոցների 76.7%-ը: Նշենք, որ 2017 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 60.5%-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2018 թվականին կազմել է 1.8%՝ 2017 թվականի 4.8%-ի դիմաց:

2017 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 26.4 և 73.6 տոկոսը, ապա 2018 թվականին նշված ցուցանիշները կազմել են 65.8 և 34.2 տոկոս:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 69.2 մլրդ. դրամ:

19. 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2,676.5 մլրդ. դրամ (5,532.9 մլն. ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 44.6%-ը՝ 2017 թվականի 2,660.1 մլրդ. դրամի (5,494.1 մլն. ԱՄՆ դոլարի) և 47.8%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 4,982.8 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության պարտավորություններն են, իսկ 550 մլն. ԱՄՆ դոլարը՝ Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Աղյուսակ 5.

ՀՀ պետական պարտքը 2008-2018 թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Պետական պարտք՝ ընդամենը	1906.0	3375.3	3805.2	4134.7	4372.1	4588.5	4441.5	5077.7	5942.1	6774.6	6922.9
ՀՆԱ-ի նկատմամբ %	16.3	39.0	41.1	40.8	41.2	41.3	38.3	48.1	56.3	58.7	55.8

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Արտաքին պարտք	1401.2	2466.1	2737.9	2951.9	3144.5	3390.8	3345.3	3839.9	4300.9	5494.1	5532.9
ՀՆԱ-ի նկատմամբ %	13.5	34.3	35.6	35.2	35.2	35.1	32.6	40.9	45.6	47.8	44.6
ներքին պարտք	328.8	408.5	504.6	565.4	633.0	689.4	656.3	761.5	1136.5	1279.7	1390.9
ՀՆԱ-ի նկատմամբ %	2.8	4.7	5.4	5.6	6.0	6.2	5.7	7.2	108	11.1	11.2

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 370.9 մլն. ԱՄՆ դոլար, որից 296.7 մլն. ԱՄՆ դոլարը՝ կառավարության եւ 74.3 մլն. դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով:

Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 7.9%՝ նախորդ տարվա 6.7%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ՝ 12.9%, նախորդ տարվա 11.4 %-ի դիմաց:

2018 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2017 թվականի 4722.2մլն. ԱՄՆ դոլարի դիմաց՝ կազմելով 4915.2 մլն. ԱՄՆ դոլար: ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է՝ 2017 թվականի 40.9%-ի դիմաց կազմելով 39.5%: Նվազել է նաև ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2017 թվականի 109.6%-ից հասնելով 105.3%-ի:

ՀՀ ԱԺ Աշխատակազմի տնտեսագիտական
փորձաքննության վարչության
տնտեսագիտական փորձաքննության բաժնի պետ՝ Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
17.05.2019թ.